



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 182

Տուգանք նշանակելու մասին

02.06.2021թ.

ք. Երևան

Քննելով տեսչական մարմնի ղեկավարի կողմից 2021թ. մայիսի 11-ին «ՕԼԵԳ ԴԱՎԹՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» ԱԶ-ի նկատմամբ հարուցված թիվ 18 վարչական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Տեսչական մարմնի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 20-ի N 198-Ա հրամանով տեսչական մարմնի տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչության ծառայողներին հանձնարարվել է չափազիտական կանոնների և նորմերի խախտումների բացահայտման և դրանց կանխարգելման նպատակով ստուգում իրականացնել «ՕԼԵԳ ԴԱՎԹՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ» ԱԶ-ում, սակայն Օլեգ Դավթյանը ստուգում իրականացնող ծառայողների օրինական պահանջները չի կատարել, հրաժարվել է տրամադրել ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, ինչով խոչընդոտել է օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգման ընթացքին:

Փաստացի խախտվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջը:

Նշված վարչական իրավախախտման համար պատասխանատու է Օլեգ Ռուբենի Դավթյանը բնակվող՝ ՀՀ Գեղարքունիքի մ., Նաիրյան փ. 97 հասցեում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182' հոդվածով հոդվածով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Տվյալ իրավախախտման համար պատասխանատու ճանաչել Օլեգ Ռուբենի Դավթյանին բնակվող՝ ՀՀ Գեղարքունիքի մ., Նաիրյան փ. 97 հասցեում և կիրառել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 182'-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը, սահմանել տուգանք՝ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305 հոդվածի՝ տուգանքը պետք է վճարվի **Պետական բյուջե 900005024014 հ/հ** տուգանք նշանակելու մասին որոշումը իրավախախտողին հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

4. Տուգանքը սահմանված ժամկետում վճարելուց հետո բանկային կտրոնի պատճենը անհրաժեշտ է 3 օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնին՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում Վարչական դատարան:

Տեսչական մարմնի ղեկավար՝



ԱՐՄԵՆ ԿՈՏՈՒՅԱՆ